ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» ---------- 2018թ. **N ------ - Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան 2800» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 2-ի նիստի N9 արձանագրությունը և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել «Երևան 2800» մշակութային հիմնադրամի 47463002 (քառասունյոթ միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երկու ՀՀ դրամ) արժեքով գույքը համաձայն՝ հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան 2800» մշակութային հիմնադրամը Երևան քաղաքի 2800 ամյակին նվիրված միջոցառումների իրականացման համար ձեռք է բերել 47463002 ՀՀ դրամի գույք:

Հաշվի առնելով վերոնշյալը, «Երևան 2800» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը Երևանի քաղաքապետին հասցեագրված 2018 թվականի նոյեմբերի 2-ի հ.12 գրությամբ ներկայացրել է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 2-ի նիստի N9 արձանագրությունը և խնդրել է նշված գույքը Երևան համայնքին նվիրելու ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել Երևան համայնքին նվիրվող գույքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

«--------» ---------- 2018թ.

N ---------- -Ա որոշման

ՑԱՆԿ

«Երևան-2800» մշակութային հիմնադրամի կողմից Երևան համայնքին նվիրատվությամբ տրվող գույքի

հ/հ	**Անվանումը**	**Չափման միավորը**	**Քանակը**	**Միավորի արժեքը (ՀՀ դրամ)**	**Ձեռքբերման արժեքը (ՀՀ դրամ)**
1	«Երևան» բացիկներ՝ ցերեկային, գիշերային	հատ	8935	110	982850
2	Մետաղական արգելափակոցներ (2.5մ լայնությամբ և 1մ բարձրությամբ)	հատ	150	15600	2340000
3	Շախմատային թվային ժամանակաչափեր	հատ	300	18000	5400000
4	Շախմատի ժամացույց	հատ	300	30000	9000000
5	Շախմատի քարեր	կոմպլեկտ	300	6000	1800000
6	«Երևան 2800» ֆոտոալբոմ	հատ	4292	1956	8395152
7	«Երևան» պատկերազարդ տեղեկատվական գիրք (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն)	հատ	3009	5000	15045000
8	«Երևանի պատմություն» գիրք (հայերեն)	հատ	1000	3540	3540000
9	Եռաչափ շախմատային ֆիգուրներ	հատ	2	360000	720000
10	Ամբիոն	հատ	1	240000	240000
	ԸՆԴԱՄԵՆԸ		**18289**	**680206**	**47463002**